

Կոուրի մէջ էին նորա եղբայրներ
Թշնամու գիմաց անասան սրտեր . . .
ձիգ արու սթափուած . . .
Մէկին զրպարտեց . միւսին մասնեց
Անձնազոհներին զաւարիր կոչեց . . .

Յանկարծ . . . սար ու ձոր . ծով զղբը-
դեցան

Բիւրք բիւրոց բերնով գոչեց ազգ
հայկեան

«Մեծ կեղտոս» անուն գու այժմ
ստացար .

«Եղբորդ մասնեցիր . սունդ կանգ-
նեցար» :
* * *

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. ՊՕԼԻՍ . 21 Ապրիլ

Վերջապէս Կիլիկիայէն նա-
մակներ ու մանրամասն տեղե-
կութիւններ հասան :

Պահրի և Պահա պէյ Կիլիկիոյ
ամէն վիճակներու ընտրողները
ապրիլ 7ին ժողովը կը հրաւի-
րեն, ձեւի համար կանչելով Պատ-
րիարքարանի ներկայացուցիչ
Խապայեան ու Կիլիկիոյ կաթո-
ղիկոսի տեղապահ Կիրակոս Ե-
պիսկոպոսները : Հրահրագրին
մէջ ըսուած է եղբր . որ ժողովը
տեղի պիտի ունենայ ընդ նախա-
գահութեամբ Կիրակոս Եպիսկո-
պոսի :

Իսոյց Կիլիկիոյ հայերը վեր-
ջապէս հասկցած են թէ . որ
թուրքին ամէն ըսածը ճշմարտու-
թիւն չէ . ու շատերը ժողովի չեն
եկած : Պահրի փաշա ժողովը կը
բանայ խելով «նախագահի տե-
ղը» :

Ատ պահուն Կիրակոս Եպիսկո-
պոս տեղէն կեցաւ և բաւական
յանդգնութեամբ կըսէ . «Փաշա .
աս ժողովը ապօրինի է քանի մը
պատճառներով : Նախ և առաջ ու-
սոր նախագահը կամ Սահակ Ե-
պիսկոպոս կամ Ես պիտի ըլլանք .
որովհետեւ զուտ կրօնական ու
ազգային գործ մըն է . իսկ այժմ
գուր էք բռնած ատ նախագա-
հական տեղը : Երկրորդ . ձեր և
Պահա պէյին ներկայութիւնը սա

«կրօնական» ընտրութեան մէջ
ամենեւին անհրաժեշտ չէ . դուք
հոս եղած պահուն ընտրողները
պիտի ճնշուի և ազատ խցով ու
կամքով չի պիտի կատարեն ի-
րենց վրայ գրուած ծանր պարտ-
քը : Երրորդ . հոս եղած պատուի-
րակութիւնը բաւարար չէ ընտ-
րութիւն մը օրինաւոր ընելու
համար : Եւ վերջապէս ասոր մեր
Պատրիարքը հրաժարած ըլլալով .
ամէն ընտրութիւնք անվաւեր կը
նկատուի . մինչեւ անոր հրաժա-
րականի խնդրին վերջնական
կարգադրութիւնը :

Կիրակոս Եպիսկոպոսի օրինա-
կէն խրախուսված՝ կը գիմարէ
նաեւ Սահակ Սրբազանը ու պատ-
ուիրակներէն մէկ քանին :

Պահրի ժողովը ցրուած կը հա-
մարէ և հեռագրով Բ. Գուրը կը
գիմէ կարգադրութիւն մը խնդ-
րելու :

Բ. Գուրն ու պալատը կը բա-
նակցին և վերջապէս Երևոյցի
որջէն հրաման կերթայ «յետա-
ձգել ընտրութիւնը ցնոր կար-
գադրութիւն» :

Օրմանեան աս անգամ հաստատ
կը մնայ իր «հրաժարութիւն» վրայ :
Կուզէ խեղճը քիչ մը զիջում-
ներ ընել . բայց այժմ արգէն ուշ
է . իր թիւն և կառավարութեան
ազգեցիկ շրջանները այլեւս
զինքը չեն սղեր :

Օրմանեան փաշայի խելքը նոր
քիչ մը տեղ ըրաւ : Թէև հրա-
ժարած՝ Ձինովիէֆի Բեղերսպուրի
մեկնելուն առթիւ զնաց անոր այ-
ցելութեան և կէս ժամու մը չափ
հետը տեսակցեցաւ : Ինչ խըն-
դիրներու մասին է խօսեր . չեմ
գիտեր . մինչեւ օրս զազոտիք է :
Շատ մը բացատրութիւններ կու-
տան մեր «տնական բօլիթիքոս-
ները» . բայց ինձ կը թուի որ
Օրմանեան գիմեր է Ձինովիէֆի
իւր ձեռքէն փախչող գահը նորէն
ստանալու համար : Ասկէ աւելին

չեմ սպասեր նորին փաշայութե-
նէն :

Երեկ . ապրիլ 20ին տեղական
թուրք թերթերը պաշտօնական
հեռագիր մը հրատարակեցին Հին
Պայազիտէն : «Օսմանեան զօրաց
ջոկատ մը սահմանագրու իս զԵՐ-
կուած է . արգիլելու համար
«Հույ-Չէթ (Պ.Պ) աւազակին» և
անոր «աւազակախմբին» Պայա-
զիտի գաւառը մտնելը : Երբ օս-
մանեան ջոկատը սահմանագրու իս
հասած էր . յանկարծ ձիւտը և
հետեւակ հարիւր հոգիներ խուճը
մը Պարսկաստանէն դալով՝ օս-
մանեան զօրաց վրայ յարձակե-
ր է : Օսմ. սպան կարգու շարեր է
իր զօրքերը . որոնք յարձակոյ-
ները սուրինի հարուածով (Պ.Պ.Պ)
վաներ են :

Քիչ ետքը աւազակները բազ-
մաթիւ մեռելներ թողլով ստիպ-
ուեր են ետ քաշուի :

Քիչ մը կասկածելի կերեւայ նախ
ատ չի նախան անունը «Հույ-Չէթ»
ինձի կը թուի . որ աս հայ ա-
նունի մը աղաւազումն է : Երկ-
րորդ «աւազակներու» խուճը մը
100 հոգի . ան ալ ձիւտը և հե-
տիտուն միասին . բաց դաշտի
մէջ . ուղղակի զօրաց ջոկատի մը
վրան յարձակիլ . . . խելքս բան
մը չի կարեր : Աւելի հաւանական
է ենթադրել որ ասոնք ալ թուրք
կառավարութեան «աւազակ» յոր-
ջորջած հայ-յեզափոխա՝ աններ
ըլլան :

Կը սպասենք աւելի մանրամասն
լուրերու ատ «միամիտ աւազակ-
ներու» մասին՝ որ թրջական ազ-
րայիլ ջոկատին սուրիններու հար-
տածողն են մեռեր ու յետ քըչ-
ուեր . . . զոնէ «զնտակներով»
ըլլար . փախուստն ու մահը նո-
րէն հասկանալի կըլլար :

Ամերիկեան դրամային գծգո-

հութեան վրայ աւելցաւ և այլ
դէպք մը :

Մէքսիկէն երկու ամերիկեան
հպատակ հայ ընտանիքներ կու-
ղեն Սմերիկա երթալ . տեղւոյն
վարչութիւնը չուզեր թողնել .
Ամերիկեան հիւպատոսը կը տանի
մինչեւ նաւ իր հպատակները :

Աս փաստին վրայ խիստ բանա-
կուի մը կը ծագի հիւպատոսին և
տեղական գայմագամին մէջ .
Թրքական վարչութիւնը հիւպա-
տոսը իբր «կասկածելի» մէկը կը
ներկայացնէ հոս . Համիտի ա-
ռաջ՝ «Հայկական գործերու կօչ-
նէ» եղբր . . .

Ամերիկեան դեսպանը խիստ
ու խիստ գիմուսներ կընէ Մէքսի-
կի ու Ատանայի վարչութիւնները
պատժել տալու համար :

Ապրիլ 20ին Աւստրիական դես-
պանատան մէջ զեսպանական
խորհուրդ կար . կըսուի թէ խոր-
հուրդին նախ թիւն էր մեծ պետու-
թիւններու ունեցած պահանջ-
ները հայկական ջարդերու ատեն
կրած փութաներու և մաքսային
խնդիրը :

Թուրք մըն ալ փախաւ . բայց
գիտէր ով . լաւ հասկցէք . զսպ-
թիւն նայր . հուշակաւոր Նէֆֆիք
պէյի սրբին . երեկ . Մէքսիկայի
չոգենաւով . զէպի Մարսէյլ :

ԲԱԺ

ՓԱՐԻՉԵԱՆ ՔՐՈՆԻԿ

Թերեւս «նարժում» ընթեր-
ցողները զարմացած լինին թէ
ինչու բաւական ժամանակ կայ որ
չեմ գրեր . զիրենք քիչ մը Փա-
րիկի հայ գաղութին ողբալի
գրութեամբը չիմ շարչարերի Փա-
րիկի հայերը կառչած մամոնայի
ժայռին . տղրուկներու պէս զայն
կը ծծեն . ու քարէն ջուր կը հա-
նեն միայն իրենց ազահութեան
պայակը մարելու . անոր զոհա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԵՇՅ ԱՇԽԱՐՀԻ ԱՆՑԲԵՐ .
ՊԱՏԵՐԱՉՄԷՆ ՅԵՏՈՅ . ՈՒ
ՅԵՂԱՓՈՒՈՒԹԵԱՆ ՆԱՏՈՒՄ

ՍԲ.

Վարդենիս որքան որ հայ գիւղ մըն
էր . այնպէս ալ քրտական որջ մը .
մերձաբնակ քիւրտեր առաւօտէ մին-
չեւ երեկոյ այդ գիւղի մէջ լեցուած
կուտէին կը խմէին : Եւ ամէն տեսակ
փեսա կը հասցունէին . առանց պզտիկ
ընդդիմութեան մը իսկ հանդիպե-
լու . հայերը ամենայն խոնարհու-
թեամբ կը քանչէին . առանց տրտու-
մը իսկ յայտնելու : Լկտի Մուսա պէյ .
չատ անդամներ այդ գիւղի մէջ ինչեր
չէր ընէր ու մարտէր :

Մարգարը՝ այդ ամէն բաները գիտ-

նալով ու տեսնելով . շատ պարզ էր
որ չի պիտի կրնար տոկալ . որովհե-
տեւ լիտիութեանց և անխիղճ հա-
րստահարութեանց չափն անցած էր .
այլեւս այդ փառախօսի սպիղանի . ու
միակ զարմանը անդամահատութիւնը
կը գտնէր . ինքն իր մէջ անպայման
կատարելու բոլորով կուտար . որով
երիտասարդական տաքարեւութեամբ
ընդարձակ վիրարութեան ծրագիր
մը գուրս բերելով . վայրկեանական
զորմարութեան կը փափաքէր . բայց
անկարելի էր . սա՛ պատճառաւ որ .
խիղճ գիւղացին տեսած ու սովորած
էր տանիլ իր ուսին վրայ բեռնուած
ստրկական լուծը . նա մանաւանդ այն
վախն որ իր սրտի վրայ թագաւորած
էր . ինչպէս կարելի էր . քանի որ
քիւրտը կսպաննէ ու կը կողոպտէ .
իր ինչքն ու ստացուածքն եթէ հո-
կատակի նորէն անորն է . ուրեմն
հնազանդիլ պէտք է . որ սպրի . ինչ
որ պահանջէ՛ տալ պէտք է որ չը գայ-
բանայ : Այսպէս խորհող հայ գիւ-
ղացիէ մը . ինչպէս կարելի է քանի

մը վայրկեանի կամ օրուան կամ տա-
րուան մէջ յեղաշրջել . բառին բուն
նշանակութեամբ ինքնաճանաչ մարդ
պարտասեւ : Իր գոյութեան և ա-
ռաջգնացութեան պահպանումը ստը-
կութեան մէջ փնտռողի մը . արգիւթ
կարելի է լայն և . իրաւասութեան
ծրագիր մը հաւաստելու . քանի որ
թուրքի մը վրայ է . եւ այնպիսիէ
մը . որ իր աչքին առջեւ ծնած . սնած
ու մեծցած . եւ իր գրացին է . հար-
կաւ ազգեցութիւն չի պիտի ունենայ .
«մարդաբէն իր գաւառին մէջ պատիւ
չունենար» ըսուած է ժամանակին .
այնինչ գիւղացիին աչքին առջեւ
քիւրտի սուր և հրացան կը սպառ-
նան . եթէ այդ ստրկական վիճակէն
նկրտի գուրս գալու :

Անա գիւղական տրամաբանութիւն
մը Մարգար վարժապետի ծրագրի
գէմ . այլ եւս խիղճ Մարգար ինչ
կրնայ ընել : Իր մանկութենէ ի վեր
այդ տեսակ անիրաւութեանց ու գա-
ղանութեանց գէմ ոխերիմ թշնամի
կարած . կը մտածէր ու կը մտածէր .

թէ ինչ ընել պէտք է դէպի կործա-
նում առաջնորդող դրութիւնէն դուրս
գալու համար :

Այդ ընդդիմութիւններէն այն եզ-
րակացութեան դալով թէ . ժամա-
նակներու հողովմամբ . ժողովրդեան
սրտի մէջ սրմատացած ստրկութիւնը .
չէ թէ օրերով և ամիսներով կրնայ
ջնջուիլ այլ ժամանակի և աշխա-
տութեան կը կարօտին . հարկադրուե-
ցաւ Լեւոն վարժապետի օրինակին
հետեւիլ . եւ ըստ այնմ 10—14 տա-
րեկան աղաներ զլիտուն հաւաքելով .
գիւղական սենեակներուն մէկուն մէջ
սկսու գաս տալ . բնական օրինաց
համաձայն . այք բէնէն սկսեալ . իր
փափաքի համաձայն չէր կրնար գաս-
տիարակել . քանի որ գիւղն իրեն
համար յատուկ զպրցող մը չունէր .
այլ ամէն տեսակէտով գիւղական
սենեակ վտանգաւոր կը գտնէր :

Լեւոնէն առաջ պէտք զգաց այդ
պակասութիւնը լեցունել . որով գիւ-
ղական մահաբերութեամբ մը Սուրբ
կարապետի և Մշոյ առաջնորդներու

ցում տալու համար . Ուրեմն ընդհանուր վիճակը միևնույն է . ինչպէս էր առաջ , ու սղգային գործունէութեան տէսակէտով փոխուելու ալ շատ երեւոյթ չունի . Աստուած բարին յաջողէ . . .

Տ. Առամշապուհ քհնյ . Քիպարեանը , թէեւ Աստուածախաղաղութեան մը , Գրիտոնեայ ու բարեպաշտ , սակայն կը ցաւինք ըսելու որ Փարիզի յարմար հովիւ մը չէ : Փարիզը որ օրէ օր կեդրոն կը դառնայ հայերու , անոնց բազմանալովը , պէտք ունի աւելի ուսեալ , ձեռնհաս և մանաւանդ Փրանսագէտ քահանայի մը : Բացի այս տեսակէտէն , հոս , բանի բուն հովիւ մը կրնայ միջոցներ ստեղծել , որ պակաս չեն , ոչ միայն մեր ազգային անունը բարձրացնելու , մեր ցեղը ճանչցնելու գիւտնազօրական շրջանակներու մէջ , մամուլին հետ յարաբերութիւնը ընդլայնելու հայկական դատին և իրաւունքներուն միջոց վառ գործ մը տալու համար , այլ և նոյն իսկ տեղին գաղութին մէջ կարօտ և արժանաւոր ուսանողներու ֆրանսական կուսակցութեան կողմէն իսկ թոշակներ յատկացնելու , դատարկագործները ու շողքորթները զիմակազերծ ընելու որ միշտ համեստին իրաւունքը կը խլեն . Իրաւ է որ Տ. Առամշապուհ Քիպարեանը Սուրբաս վրդ . Պարոնեանի հետ կարելի չէ բազդատել , որ չէր ուզեր անկախ ու կենսատու մտքերէ շրջապատուիլ որ իրեն ալ կրնային կենդանութիւն տալ : Տ. Առամշապուհ համեստ է . չենք կամենար բնաւ շարութիւն տածել զէպի ինքը , սակայն կը վախճէ ինք որ գոնէ իր ուժերու ներածին չափ աշխատասէր , միշտ անկախ ոգին վառ պահէր իր մէջ , հարուստներուն հետ իր մտերմական յարաբերութիւնները պահպանելով հանդերձ , երբէք անոնց առջեւ չսարկանար :

Մէկ քանի շաբաթ առաջ Վառնայի ձեր դրացի թերթին մէջ կարգացի յօդուած մը ծանօթ Չօպանեան—Պալֆայեան խնդրոյն առթիւ : Չօպանեան իրիտ լուկընէր եթէ իր դրաշարին օգնութեան զիմելով իր ակարութիւնը ցոյց չտար . որովհետեւ գոնէ հեռուէն զինքը բան մը (.) կարծողները մէջ հարուստով չպիտի յուսախափուէին : Կ. Պալֆայեան , ողբերգու դերասանութեան պատրաստող երկտասարգը , այս օրերս հոգեբանական ամենավատթար վիճակի մը մէջ կը գտնուի : Մի զարմանաք հրը իմացնեմ ձեզ թէ անիկա հիմա քահանայ լինելու կը պատրաստուի : Անրնական վիճակի մը սկզբնաւորութիւնն է , որուն գուցէ հետեւանքները աղետաբեր լինեն այդ խեղճ տղուն համար , ու անոր կեանքին վերջակէտը գնեն : Կ. Պալֆայեան «հիւանդ» է բառին ամենալայն իմաստով թէ հոգեպէս և թէ ֆիզիքայէս : Պալֆայեան ունէր իրաւամբ բնական լաւ ձիրքեր , սակայն չունէր կորովի դաստիարակութիւն : Թոյլ էր , պէտք է առաջնորդուէր կարող ձեռքերէ , ինչ որ , զժբազդաբար , պակասեցաւ իրեն :

Չօպանեան անցեալ տարի «խաչողը մը» յօդուածովը այնքան տքնութիւններով իրեն ասպարէզ մը շինելու աշխատող Պալֆայեանին անունը մտածելու ելաւ . այնպէս որ Պալֆայեան խիստ ազդուած զայն ապտակեց Փարիզի «ժարէն» տը Լիւքսամպուրկոյի մէջ : Չօպանեան ապտակուեցաւ որովհետեւ ճանչնալով Պալֆայեանի անցեալը՝ անձնական քինախնդրութեամբ մը և վրիժարութեամբ մը վարուեցաւ անոր դէմ , փոխանակ ներողամտութեամբ մը և պարզ խրատականով :

Պալֆայեան այդ օրէն տեսակ մը մտորում կեանք ունէր . այդ յօդուածէն ազդուած էր , որով-

հետեւ հասարակութեան միտքը պղտորուած էր իր նկատմամբ : Անիկայ չունեցաւ հաստատակամութիւնը առանկ անիմաստ ու անձնական հաշիւներէ ծագող գրութիւններուն ականջ չկարելու , ու իր այլալայն առողջութիւնը չուշացաւ զինքը շլախատաւոր մը ընել :

Պալֆայեանի այսօրուան ողբալի վիճակը իր կեանքի այդ և նմանօրինակ «փէրիփէսի» ներուհետեւանքն էր : Ինքուսանութեան հրաժարած է այսօր , որովհետեւ իր մէջ քրիտոնէական Աստուածապաշտութեան զգացումներ արթնցած են : Տեսակ մը միտքի քական վիճակ :

Օրինակի համար կը կարծէ որ պատանեկական կեանքը Աստուածային տնօրինութեան մը հետեւանք էր , նմանապէս մինչեւ այս վերջին , արտասովոր եղանակով մը , դերասանութեան հասնելը հալածուեցաւ ամենքէն , կըսէ , որպէս զի օր մը զիջլի եկող անուակ որդիի մը սիրով . փարի Աստուծոյ եւայլն : Կը խօսի Պօլոս առաքեալի վրայ , պիղծ կանուանէ դերասանութեան ասպարէզը , ուր բարոյական և վաւաչուտ կեանքը կը վարակի : Որու դէմ որ փոքրիկ յանցանք մը գործածէր անկից ներողութիւն կը խնդրէ . որովհետեւ , կըսէ , ինքը Յիսուսի նման նախատինքներ տանելու համարութիւնը չունեցաւ , սուրին դէմ սրով պատասխանելու յանդեմեցաւ : Ահա այս դրութեան մէջ , հոգեկան վիճակի մը տարտամութեան մէջ , Պալֆայեան , իր կարգին , Չօպանեանէ ալ ներողութիւն խնդրելու կելլէ միայն և միայն իր տուած ապտակին անվայելութեան համար , և այս խօսքերով : «Չօպանեան դուք զիս անիրաւեղը նախատեցիք , դուք կրնաք կեղծաւոր մը , անպիտան մը լինել . այդ բանը զիս չի զբաղեցնէր : Չեղմէ ներողութիւն կը

խնդրեմ , որովհետեւ հիմա աստուածախաղաղութեան պատուէրին հայտատակիլ , թէ եօթնասուն եօթնամեակի թէ ապտակ զարնենք զարձեալ միւս երեսը դարձուր . ես ձեր նախատինքներուն ապտակով պատասխանեցի փոխանակ համբերելու . և որովհետեւ հաղորդութիւն պիտի առնեմ վաղը՝ ձեզմէ այդ ոչ աստուածահաճոյ քայլիս համար ներողութիւն կը խնդրեմ» :

Ահա ամեն անցած դարձածը , զոր խեղաթիւրած է Չօպանեանի արժանավայել բլշակն զրաշարը , Ա. Ն. , ձեր դրացի թերթին մէջ : Այս դէպքը կը պատահի , չմտանամ ըսել , Չօպանեանի գրաշառքերը վերջերս բացած ճաշարանին մէջ , ուր կը յաճախեն Փարիզի տիրահաշակին արբանեակները՝ հաւով ու հաւազով :

Չօպանեան Պալֆայեանի դժբաղդութեան զխաւոր սկզբնապատճառը , այսօր կուզէ , ինչպէս կը տեսնէք , օգտուել այդ խեղճ տղուն հիւանդ վիճակէն՝ իր գիւտին կրքերը գոհացնելու , հրէշ փառասիրութիւնը փայտալիւն , փոխանակ ցաւ զգալու , զգածուելու ու խեղճ դերասանցուին բժշկուելուն վրայ մտածելու :

Երանի իրեն . . . Իր տիրացու գրաշարին : Հողար երանի : ԳԱՍԵՆԸ Փարիզ

ՍՍՐԱՃԵՆԸ ԵՒ ԽԳՈՐԾԸ

Սորադրէն ինքնին կը հասկցուի թէ ինչու համար ւտիպուած եմ երկարել այս յօդուածը . անիկայ ճանչնալու կամ անոր մասին գաղափար մը կազմելու համար կարժէ որ բնութեցողը ուշադրութեամբ աչքէ անցունէ ամեն մէկ աւղերը :

Անցեալ կիրակի Մարտ 26 Ուէսթ-Չօպօքընի յարանին մէջ խօսեցաւ Տ. Թ. Չարչաֆճեան ընտիր եւ շահաւէտ նիւթի մը վրայ , կը խօսուէր թէ

զիմեց , յիշեալ գրութիւնն վաւերացնել տալով Պօլիս ուղեւորեցաւ . Պատրիարքարանի ուշադրութիւնը այդ աղքատ գիւղի վրայ հրաւիրելու , և միանգամայն ձեռնարկուած գաղտնի շինութեան մասին ակնկարծութիւն խնդրելու :

Պատրիարքարանը՝ Մշոյ երկու անաղիորդարաններու վաւերացեալ մասնէրագրութիւններն ինկատի առնելով , հրամայեց 500 մէճիտի պիլէթ և Ժապաւիսեալ ստամար մը տրուի Մարգար վարժապետին ստակ հաւաքելու համար : Մարգարը իր փափաքած ձեռք բերելէ յետոյ , գիւղ զրեց՝ աւետելով իր յաջողութիւնը . քանի մը ամիսներ շրջադայեց , զբարոցի շինութեան ծախքը ձեռք բերելով , հայրենիք վերադարձաւ , վերադարձին եւս գաղտնի շինուած և վերջացած գտնելով :

Մարգարի այսպէս կամաց կամաց դէպ յառաջ երթալն , և անոր վերջին յաջողութիւնը , նա մանաւանդ գիւղացւոց դէպի առ ինքն օր ըստ օրէ

համակրութիւնը աւելնալուն մէջ , ուրիշ բան մը չէր նկատուէր . եթէ ոչ իր գաղափարներու ծննդեան երկունքն ու սկիզբն . եւ այդ քաջալերական յոյսերն ներշնչուած , օր առաջ իր նպատակ առաջ տանելու համար , իր աշխատութիւնը կը կրկնապատկէր , ցորեկները գաղտնի մէջ կաշխատէր , գաղափարական յեղափոխականները դուրս բերելու , իսկ իրիկունները ամէն օր շարունակ , առանց ձանձրանալու գիւղական սենեակներ կը յաճախէր , իրրեւ աշուղ մը , հայոց պատմութեան հէքեայթի կերպարանք տալով բերանացի կը մտածէր . մէկիկ մէկիկ հայոց քաջաց կարիճութիւնները ցոյց տալով , երբեմն ալ անցեալը ներկայի հետ բաղդատելով կը յանդիմանէր , առարկելով թէ՛ օտթէ մենք այն քաջաց զաւակներն ենք , ինչու իրրեւ սարուկ լուելով ամէն հլութեամբ կը տանինք , երբ մեր պատիւը մեր աչաց առջեւ կը բռնաբարուի , մեր ինչքն ու ստացուածքն կը յափշտակուի , այնպիսիէ

մը որ մարդ կոչուելու իսկ արժանի չէ . նա Աստուածային եւ մարդկային օրէնքներն չը ճանչնալով , իր գաղափարային վայրենութեամբ , մարդկային ամէն սրբութիւնները ստնակոխ ընելով , ապօրինի կերպով զիտէ բռնանալ , և իր գոյութիւնը պահպանել , միթէ մենք իրրեւ մարդ եւ միանգամայն քաջաց զաւակներ չենք կրնար օրինաւոր սահմանի ներքեւ գիմաղել , մեր մարդկային իրաւունքները պաշտպանելով :

Ձեռքէն եկած միջոցները ու աշխատութիւնները չի խնայեց , դարուոր ստրկական կեանքն ու վախէն դուրս բերելու համար իր գիւղացին . և այսպէս առժամանակեայ պողարիւնութեամբ մը առանց զրգուելու , համակերպեցաւ անոնց ամէն մէկ քայլին , և այս աւուր անհրաժեշտ ձեռք առնուելիք ու լուծուելիք խնդիրն ամիսներէ ու տարիներէ յետոյ գործադրել մտադրեց . նախ և առաջ նախապատրաստել , և . սպա գործնական ապացոյցներով հաստա

տել յանձն առաւ : Այս ընթացքով 1880 թուականին սկսեալ մինչեւ 1883 թուական , պարզ հանդիսատեսի մը զեր կատարեց , չի տեսնուած ու չը լուած բարբարոսութեանց ու եղիտնադորժութեանց առջեւ :

Մարգար վարժապետի աշխատութեան գործն քերական ու քերականութիւն չէր , որ շիտակ խօսելու ու գրելու ձեւերն զժուարանար սովորեցնելու , ճարտարախօսի պէտք երբէք չէր զգար , որ իր աշակերտներն ճարտասանութեամբ զրաղեցունէր , սրամարանութեան կարեւորութիւն չէր տար , քանի որ նպատակ չունէր , ծախուած , վատ եւ միանգամայն երեւակայական յոյսերով ժողովրդեան խաբելու . նկատող կրօնաւորներ ստեղծել :

ՄԱՍԻՆ ԳՅՈՎԱԶԱՆԵՆԵՍԻՆ

(Շարունակելի)

Ունենալով վանահայրն ալ ներկայ պիտի դանուէր, եկեղեցոյ առկախ մտացած խնդիրը կարգադրելու համար։ Ատենախօսքը դեռ խօսքերը չաւարտած ներս մտան խումբ մը մարդիկ, ուղղունընդմէջ ընդ հարաւեցան։ Կարգադրելու համար վարդապետը լաւ կը ճանաչէր, նոյնպէս զիրենք առաջնորդողներէն մէկ քանին։ Միայն մէկը որ իր զէմքը «հին խորախէլացի» մը ըլլալը կը հաստատէր աւելի ուշադրութիւնս գրաւեց։ Անգիտին անհամեմատ երկար մօրութեամբ շար սովորութիւն մը ունէր-դէպի աջ ձեռքով, որով ձերբակր խորախէլացիէր ձեռքը հոնկէ անպակաս ընել, զայն չտկելու համար, բայց... անօգուտ։

Օրուան ատենախօսքը հակիրճ խօսքերով վերջացուց ընդհանրապէս, լաւ եւ ուրախ սպասուողութեան տակ թողալով ներկայները։ Ուստի անոր ծախսահարուելէ ետք ժողովը գոցուեցաւ։

Յետոյ եկեղեցոյ ժողովը բացուեցաւ Տ. Թ. Չարչաֆեանի ատենապետութեամբ։ Կարգաց յայտագիրը ու խօսեցաւ։ Բուն խնդիրն վրայ, այն է ամիսներ առաջ ժողովրդի քուէարկութեամբ ընտրուած յանձնախումբի ետքը անդամներէն երեքը ժամանակէ մը ի վեր հեռացած էին գործելէ, տնոնց անդ նորերը պիտի ընտրուէին։

Առաջին կարգը ինձ անձանքին էր, երբ ինք զինք ծանօթացուց հոն իսկոյն շտկեցի սխալ «նոր խորախէլ» մեր ու... Սարաճեան կը կոչուէր, ուրախացայ զինքը «ձեր» ծանչնալուս համար։ Այս «քարձրաստիճան» կը կրէր ատենախօսքը կրճատելով կը խօսէր եւ եթէ ներքին ըլլար ինձ անոր ամբողջութեամբ հոսքը տեսնել, շատ զիւրի պիտի ըլլար ինձ ծանչնալու անոր ինչ տրպար ըլլալը։ Սակայն ո՛չ «Շարճու»-ի սխալակները կը ներքին եւ ո՛չ ալ կուզեմ ընթերցողը զբաղեցնել այնպիսի անհաճոյ խօսքերով։ աս չափով միայն բաւականանա՞մ ինչ որ ինքզինքը գիտցող մարդու մը չի վայելիր խօսել, մանաւանդ «քարձրաստիճան» եկեղեցականի մը համար, ըսաւ ու ոչինչ խնայեց։ Կարծես անվայել խօսքերու շտեմարան մը ըլլար իր ներսի զին։ Իրաւ ալ այնպէս էր, զի նոյն վայրկեանին հաստատեց ըսելով. «այդ ըստը խօսածներս իբր քաջալերական մը կը բաւեն ձեզ» եւ ալ ընթերցողին կը թողում չափել անոր բարոյական աստիճանն ալ։ Մոռցայ ըսել որ լուսանկարներու ամբարէն զուրս թափած հեղեղի 1/3ը ուղղակի եւ անուղղակի ատենապետին կուղղէր։

Գիտէք ինչո՞ւ։ Թ. Չ. «Հայրենիք»-ի արդի խմբագիրը, իրեն սկզբունք ըրած է հարուածել այն անձերը՝ որոնք ազգիս ղեկավարները ըլլալու անարժան են. մտրակել՝ ամէն անոնք, որոնք խոչնդոտներ կը հանդիսանան ազգագուտ ձեռնարկներու ձեռնամուխ եղողներուն, կըռուել ճշմարտութիւնը խեղաթիւրող եւ ժողովրդի միամիտ դասակարգի երակներուն մէջ թոյն ներարկողներուն զէմ։ զիմակազուրկ ընել ազգային այս եւ այն հաշիւներուն մէջ զեղծում գործողները եւ վերջապէս քննադատել «մեծն» կոչուողներու թերի կողմերը, ուղէ աշխարհական ըլլայ ուղէ կղեր. ասոնց համար է որ Սարաճեանի եւ իր վտանակի կողմէն կը զրպարտուի։ Սարաճեան ալ այդ յիշուած շարքերու մեծ մասին, եթէ չեմ սխալիր ըսելու գրեթէ ամենքին ալ ենթակայ եղած է ու կը շարունակէ ըլլալ։

Շարունակեմք մեր պատմութիւնը. Սարաճեան ամիսներէ ի վեր ամէն

ճիգ կը թափէր Թ. Չ. հեռացնելու իր այս պաշտօնէն, որպէս զի ուղարկին պէս, ինքը չալէ, ինքը խաղայ. անոր համար ժողովուրդին կը պնդէ թէ «պէտք է ետ առնէք ձեր տուած քուէները ու... «Ե՛ս» պիտի ընտրեմ» (ընկալանարար իր ուղարկները)։ սակայն ժողովրդի ստուար մասը որով իրեն զգացման ու պատուի աւերն էին, չնկունեցին այդ մեծ խարդախութիւնը. հեղեղեալ ժողովուրդը կը յուզուէր, ճշմարտութեան հայածիչը՝ իր խաղը կը շարունակէր, իսկ Թ. Չ. նախամեծար համարեց հրաժարիլ, քան մրցիլ ապուշ զերասանի մը հետ։ Սարաճեան՝ ատենապետի ձայնը լսելուն զող ելաւ, ատենց պատեւը անոր խօսքերու վերջաբանին, լարուած մեքենայի նման թրթռալ սկսաւ։ Ժողովրդին մէջ շփոթութիւնը ինկաւ. մէկը կարգապահութիւն կը պահանջէր, ուրիշ մը քաղաքավարութիւն, իսկ մեր «քարձրաստիճանը» ամէնուն գոհացում տալու համար մէկէն յարձակեցաւ ատենապետին վրայ, վայրենական ցընցումներով զանիկայ զուրս հանել փորձելով։ Մինչ ատենապետը կը զարմանար զստամեալի տարօրինակ ընթացքին, զրգոտած ժողովուրդը իրար անցաւ. կոխել սկսաւ, բարձրագոյ աղաղակներով սրահը կը զղրգար, սթոններն իբրեւ զէնք կը գործածուէին, բազմութեան մէջէն ձեռք մը Սարաճեանի ժխաբուած մօրութեամբ կը մաքրէր եւ անուղղի զուրսը մերթ մերթ պատին զբացնելով, կարծես կը ջանար գիտնալ ո՞ր աստիճան կարծր ըլլալը, Անգիտ լսելի ձայնով մը կը մկկար ու՛, ու՛, ուրիշներ ալ բռունցքի հարուածներ ճաշակել կուսային անոր։

Այս վարդապետը մտնալով Մարտիկի մէկ պանդոխտին մէջ ինքզինքը անբարոյականութեան զիրկը նուիրած ըլլալն ու ընտրուելը, մտնալով նոյն փորձը Փոստիւնէնի մէջ կրկնած ըլլալն ու անկից վտանակելը եւ մտնալով նիւ-Եօրթի մէջ իր բրած մատնութիւնն՝ մէջ ինկած էր ու արդարութեան պաշտպանները կը հաւածէր, իր աէրը պաշտպանելու համար (ի հարկէ փոխադարձ ընդունելով)։

Առաջին անգամ ատենապետի հեռագրային քրքիչով մը իր վտանակին հետ շունչը փողոցն առաւ, եթէ ատենապետի զինքը ազատելու ջանքերը ուշանար, տարակոյս չիկար ժողովուրդէն բղիկ բղիկ պիտի ըլլար։ Չեմ ուզեր ըսել անոնք՝ որ փողոցին մէջ, տեղացի լակոսներէն ծաղրուեցան իրենց անպատկառ կերպարանքներուն համար։ Սրբազանի ցամքած ձեռքերը լուրբատողներէն քանին, սրահին մէջ դեռ կը շարունակէին մաքառիլ արդարութեան կորովի պաշտպաններուն զէմ։

Երկու խօսք ալ Սրբալան Սարաճեանին հարցնեմ ու վերջացնեմ. չեմ կարծեր իմ արդար բողբոխ համար սրդողի։

Չեզր պէս «քարձրաստիճան» եկեղեցականի մը համար կը վայելէ՞ր այդ արարքը. ա՛յս է եղեր ձեր պաշտօնի կոչումը, անմիթար ու վըշտաբեկ հորդ այդ հեռուոր աշխարհին մէջ միթիւրելու, ա՛յդ միջոցը նախընտրած էք գծալ պատակալ ու իրարմէ բաժնուի։

ԾԻՒՒ ՌԵՏՈՒՆԻ

Ճրգի, 30 Մարտ

—)(—

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Տեղւոյս հայ իգական սեռ արդէն մասնակցած ըլլալով «Վասպուրականի» Որբախնամ ընկերութեան, սրոյած է ըստ կազմական կանոնագրի ընդհանուր ժողով կազմել, որու օրակարգը պիտի ըլլայ գործ. մոլովոյ ընտրութիւն։

Աստի կը հրաւիրենք որ ամէն մասնակցող, եւ մասնակցելու փափաղողներ ներկայ գտնուին կիրակի ապրիլ 30 ժամը 10—11 աղքային վարժարանի օրիորդաց շէնքին մէջ։

Ի դրմաց Որբախնամ Ընկ.

Անդամուհիներու

- Ա. Աւիրխանեանց Ա. Ազնաւորեան
Պ. Յ. Բարսաւեան Ի. Նորիկեան
(Կնիւի) Ի. Պալանեան
Վառնա, 24 Ապրիլ

Ա. Զ. Դ

Տեղւոյս որբախնամ ընկ. գործ. ժողովը՝ նկատի առնելով որ շարժաթմբարները առանց հաւաքչի կարելի չէ ժողովի լրագրաց միջոցաւ հրաւէր կարգացած էր փափաքողներուն, գիմեցին՝ պարտայք Ռուբէն Գարապաճաքեան Գալիթի Շիրինեան, Մեծատուր Պէրպէրեան եւ կարապետ Պալճեան. նուազարդի գրուելով՝ Պ. կարապետ Պալճեան ամենէն նուազ այսինքն հարուրին ութը վարձքով. ընդունելով եւ անկից պակաս առաջարկող չգտնուելուն գործ. ժողովը յանձնած է Պ. կարապետ Պալճեանի ըստ օրինի կանոնաւոր երաշխաւարութեամբ. զուտի անկէց պակաս տոաշարկողները պէտք է գիմեն գործ. ժողովին։

(Կնիւի) Վարչութիւն

ՏԻԿԻՆ ՊԱՅԾԱՌ ԳԱՍՈՒԼԵԱԾԱՆ

Տիկին Պայծառ Ֆասուլեանեանի նպատակ հինգ շաբաթի գիշերուան արուելիք ներկայացումը օգի խառնակութեան պատճառաւ յետաձգուած է չէ այս գիշերուան։

Տիկին Պայծառ Ֆասուլեանեան որ երկար տարիներէ ի վեր ծառայած էր Պոլսոյ հայ թատերաբեմին գաղթականութեան հոսանքին ենթարկուելով մնաց Վառնայի մէջ, շատ զիւրի է հասկնալ թէ ինչ պայմաններու մէջ կրնայ իր օրապահարկը ճարել Պուլկարիոյ մէջ շաբաթուարեալ մը. այս առթիւ Վառնայի հասարակութիւնը իր այցելութեամբ սոյն հմուտ արուեստագիտուհին քալերել պարտական է։

—)(—

ԱԶԳԱՅԻՆ ԲՐՈՆԻԿ

Ռուսուքի մէջ. քաջ նահատակ Սերբի անունով նորերս Դաշնակցական մի խումբ է կազմուելու խումբը կազմողները թարմ երիտասարդներ են, եւ իրենց պաշտելի քաջի ըմբոսա հոգին միսիթարելու համար Զատիկի շարքարթին ներկայացուցեր են «Գայլ Վահան» ողբերգութիւնը ի նպատակ հայ Յեղափոխական Դաշնակցութեան։

—Ապրիլ 20ին Խրիմի Թէոդոսիա քաղաքի մէջ յանկարծակի մեռեր է հայագրի հոշակասոր նկարիչ Ալեքսանդրով. Հանգուցեալը նոր վերադարձած էր Լեւոն Ռուսպուրկէն բոլորովին առողջ. Մեռած օրը իր կնոջ հետ զբոսանքի էր ելեր. վերադարձեր է առն առանց ցաւ մը ունենալու եւ հիւրեր կուսակցեցեր։ Վախճաններ է իր բազմաթիւ մէջ. Ամբողջ Խրիմը սգոյ մէջ է։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Անդկոյցիներու ձեռքը անցած է երկու կարեւոր նամակներ. մէկը Սրամի Նախագահ Շոտլեն ժէնէրալ Պոսային ուղղուած, միւսը Գրիկէրի կողմէն բերդապահ զօրավարի մը. նամակներու մէջ կը պարզուի որ պօէրներու վիճակը աղէկ չէ։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ընթերցասիրաց ընկերութիւնս, քաղաքիս անուս-չափահաս հայոց մտաւորական եւ բարոյական զարգացման նպատակու համար, որոշու է տալ գիշերային դասեր, մայիս 1էն սկսած, երեկոյեան ժամը 9էն մինչեւ 10, 50 ամեթիմ շաբաթականով, որ յատկացուելու է ի նպատակ ընթերցասիրս։

Պիտի աւանդուին հետեւեալ դասախօսութիւնները.

- Երկու շաբաթի Հայոց Պատմ.
Երեք շաբաթի Պուլկարեան
Չորեքշաբթի Գաղղիներէն
Հինգ շաբաթի Հայերէն
Ուրբաթ Թուրքաւորութիւն
Շաբաթ Գաղղիներէն

Փափաքողները կը հրաւիրուին գրիմել ընթերցարան եւ արձանագրելու տալ իրենց անունները ընթերցարանիս հակիչին. չմտնալով միտնողամայն յիշեցնել թէ՛ սր դասախօսութեանց կուզեն հետեւիլ։

Ընթերցասիրութեան վարչութիւնը կը խնդրէ յառաջ թմաւէր հայ հեղինակներէ եւ հրատարակիչներէ որ բարեհաճին քաջալերելու օժանդակելու այս քարենպաստակ ձեռնարկիս. նուիրելով իրենց հրատարակութիւններէ մի մի օրինակ եւ ընթերցարանիս։

Կը յատենեմք նաեւ մեր շնորհակալութիւններ այն ամէն նուէրներու համար որ ըլլալու են ազնիւ հայ հասարակութեան կողմէն։

Վարչութիւն Ընթ. Ընկ.
Վառնա 20 Ապրիլ